

## **Սիրելի հայրենակիցներ,**

Կը յուսամ թէ բոլորդ ամառնային լաւ արձակուրդ մը անցուցիք եւ կազդուրուած ու վերանորոգուած տրամադրութեամբ կը շարունակէք ձեր առօրեայ աշխատանքը:

Դպրոցական վերամուտին առիթով յաջողութիւն կը մաղթեմ բոլոր հայ աշակերտներուն անխտիր, թելադրելով որ, ժամանակը լաւապէս օգտագործելով, ձգտին առաւելագոյնին, որպէսզի ապագային հեզասահ կերպով շարունակեն իրենց բարձրագոյն ուսումը, միշտ բարձր պահելով հայ աշակերտին վարկն ու անունը:

«Լրատու»ի նախորդ թիւով ձեզի տեղեակ պահած էի Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կիպրոս եռօրեայ այցելութեան մասին, որ մեծ յաջողութեամբ իրականացաւ Յուլիս 21-25ի միջեւ: Այս այցելութեան առիթով տեղի ունեցած պաշտօնական մակարդակի տեսակցութիւններուն մանրամասնութիւններ կը գտնէք յաջորդող էջերուն մէջ:

Սեպտեմբեր ամսուայ մէջ, Կիպրոս այցելեց Շրջանային կամ Փոքրամասնական Լեզուներու Պահպանութեան Եւրոպական Զիմնաթուղթի (Charter) Զարտուղարութեան մասնագետներէ բաղկացած պատուիրակութիւն մը, որոնց հետ ունեցայ արդիւնաւետ տեսակցութիւն: Մանրամասնութիւնները կարդացէք «Լրատու»ի թիւ 9 էջին մէջ:

Սեպտեմբեր 24ին, «Holiday Inn» պանդոկին մէջ տեղի ունեցաւ խորհրդաժողով մը, նիւթ ունենալով «Այլազանութիւն եւ Զաւասարութիւն Կրօնքի եւ Կրօնական

Խտրականության Դեմ»: Շատ շինիչ նախաձեռնություններն էր այս մեկը, կազմակերպուած Ընկերային Ծառայութեանց Սպասարկութեան կողմէ: Որպէս Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ, խօսքիս ընդմէջէն կատարեցի հիմնաւորումներ եւ ներկայացուցի առաջարկներ, որոնք ներկաներուն կողմէ հետաքրքրական եւ կարեւոր նկատուեցան: Զիմնական կետերուն եւ այլ տեղեկութիւններու մասին անդրադարձած ենք «Լրատու»ի թիւ 10 էջին մէջ:

Յոկտեմբերին պիտի մեկնիմ Սթրազպուրկ, մասնակցելու Եւրոպական Խորհուրդի Գլխաւոր Կառոյցի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան (Framework Convention for the Protection of National Minorities) խորհրդաժողովին: Տեղին է յիշել, թէ Եւրոպական Խորհուրդի Ընդհանուր Զարտուղարութեան ընտրանքով, Կիպրոսի երեք կրօնական խմբակցութիւններէն պիտի մասնակցի միայն Զայ Պետական Ներկայացուցիչը: Այս խորհրդաժողովին պիտի մասնակցին նաեւ Զասարակական Կազմակերպութիւններ (NGOs), որոնք մեծ ներդրում ունեցած են այս կառոյցին ամրապնդման եւ հզօրացման աշխատանքներուն մէջ: Զամագումարին մասին տպաւորութիւններս եւ յաւելեալ տեղեկութիւններ ձեզի պիտի փոխանցեմ «Լրատու»ի յաջորդ թիւով:

Թոշակառուներու կամ տարեցներու իրաւունքներուն եւ նպաստներուն առնչութեամբ հանդիպումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 2 Նոյեմբեր 2008ին, կ.ա. ժամը 11:30ին, Ազգային Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ: Յաւելեալ տեղեկութիւններու համար կը խնդրուի ընթերցել ներփակուած թղթիկը:

Ներփակ պիտի գտնէք նաեւ հանրածանօթ «Զա-

տանս» համոյթի թերթիկը: Հանդիպելով կը տեղեկացնեմ, թէ Կիպրոս պիտի գտնուին Երեսփոխանական Գրասենեակի յատուկ հրաւերով, միայն մէկ ելոյթ ունենալու համար՝ Ուրբաթ, 28 Նոյեմբեր 2008ին, Լաչչայի Քաղաքապետարանի սրահին մէջ: Եզակի այս հնգեակը, Պրն. Արմեն Պապախանեանի գլխաւորութեամբ, հանդես պիտի գայ հայկական եւ Եւրոպական դասական ու արդի երաժշտական կտորներով, որոնց պիտի ընկերանայ Յունահայ հիւր երաժշտագետ Նուարդ Կալիլէյան:

Միշտ գիտակցելով, թէ Հայ պատանիին Ազգային դիմագիծը լաւապէս ամրապնդելու համար, Հայերէն Լեզուի եւ Հայոց Պատմութեան ուսուցման հետ զուգահեռ, ան պէտք է լաւապէս ծանօթանայ Հայ մշակոյթին ու արուեստին, կը փափաքիմ փոխանցել, թէ Նոյեմբեր 2008էն սկսեալ անվճար պիտի սկսի գործել, Կիպրահայ Գաղութի Ներկայացուցիչի նախաձեռնութեամբ, «Արուեստի Հայկական Դպրոցը»: Այս մասին յաւելեալ տեղեկութիւններու համար կը խնդրուի ընթերցել ներփակուած յայտարարութիւնը:

Սիրելիներ, կը յանձնարարեմ որ բոլորդ ձեր ներկայութեամբ քաջալերեք վերոյիշեալ ծրագրուած ձեռնարկները եւ նախաձեռնութիւնները, որպէսզի լաւապէս օգտուիք այս ընծայուած իւրայատուկ առիթներէն: Տարուած աշխատանքը մեծածաւալ է եւ բոլորիդ մասնակցութիւնը խիստ անհրաժեշտ՝ ի շահ մեր հին ու նոր սերունդին:

**Վարդգէս Մահտեսեան**

**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն

Այս ուղղութեամբ մեր գրասենեակին կողմէ տարած աշխատանքները, ամառնային արձակուրդին առիթով փոքր դադարէ մը ետք, դարձեալ օրինաւոր կերպով վերսկսած են եւ Սեպտեմբերէն սկսեալ մեծ թիւով անհատներու եւ ընտանիքներու օրինաւոր կեցութեան եւ աշխատանքային հրամաններ շարունակեցինք ապահովել: Նախքան արձակուրդի մեկնիլը, Յուլիս ամսուայ մէջ, մեզի յանձնուած բոլոր հարցերը, այս եւ կամ ևոր քաղաքացիական դիմում ներկայացնելու առնչութեամբ, ամբողջացուցած էինք:

Օգոստոս ամսուայ մէջ ճամբորդող մեր հայրենակիցներուն, բերանացի խիստ պատուիրած էինք երկիրը չլքել, առանց կեցութեան արտօնագիրին բնօրինակը (original) ստանալու: Հակառակ այս իրողութեան, պատահեցան դէպքեր, որոնք Կիպրոս վերադարձին մուտք գործելու հարցեր ունեցան, որովհետեւ իրենց հետ ունեին միայն կեցութեան դիմումին ստացականը եւ ոչ արտօնագիրին բնօրինակը: Հետեւաբար, պետք եղաւ Պրն. Մահտեսեանին անմիջական միջամտութեան:

Գալով Քաղաքացիութեան դիմումներուն, որոնք երկար ժամանակէ ի վեր տակաւին առկախ կը մնան, Պրն. Մահտեսեան կը շարունակէ այս հարցերուն հետապնդումը, ուղղակիօրէն կապ հաստատելով Ներքին Գործոց Նախարարութեան հետ:

### Շնորհաւորական գիր

18 Յուլիս 2008 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը իր շնորհաւորութիւնները փոխանցեց

Պրն. Յարութ Թահմազեանին, «Համահայկական խաղերու Համաշխարհային Կոմիտե»ի ՀԿ Գործադիր կոմիտեի նոր անդամ նշանակուելուն առիթով:

22 Սեպտեմբեր 2008 թուակիր շնորհաւորագիրով մը, Պրն. Մահտեսեան, իր ջերմ գոհունակութիւնը յայտնեց Պրն. Ալեքսանտըր Հատճիլիրային, Կիպրահայ գաղութին մասին սիրայօժար կերպով պատրաստած «Ժամանակագրութիւն» գրքոյկին առիթով, որ լոյս տեսաւ եւ հասարակութեան տրամադրութեան տակ դրուելով անվճար բաժնուեցաւ «Politis» թերթի 14 Սեպտեմբեր 2008 թիւով:

### **Յաւակցագիր**

10 Սեպտեմբեր 2008ին, Կիպրահայ գաղութի անունով եւ որպէս Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ, Պրն. Մահտեսեան ցաւակցագիրներ յղեց Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Սեպուհ Եպս. Սարգիսեանին, Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ Բաբգէն Եպս. Չարեանին, Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Նշան Եպս. Թփուղեանին, ինչպէս նաեւ Հիւսիսային Իրանահայութեան Պատգամաւոր Պրն. Գեորգ Վարդանեանին, Թուրքիոյ արեւելեան շրջանին մէջ տեղի ունեցած դժբախտ պատահարին առիթով, որուն զոհ գացին 17 Իրանահայեր:

### **Հարցազրոյց**

8 Յուլիս 2008ին, Կիպրոսի Լրատուական Գործակալութեան թղթակից Տիկ. Մարիա Ֆիլի շահեկան հարցազրոյց մը ունեցաւ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանին հետ: Այս հարցազրոյցը, իր բովանդակութեան տեսակէտէ անկեղծ ու ճշգրիտ ըլլալուն, պատշաճ ձեւով լոյս տե-

սաւ յունատառ եւ անգլիատառ տեղական մամուլի էջերուն մէջ: Հարցազրոյցի ընթացքին Պրն. Ներկայացուցիչը շեշտած էր իր ներկայութեան ձեւական կարգավիճակը Կիպրոսի Խորհրդարանէն ներս, սակայն ընդգծած՝ թէ առ այժմ լուռ պիտի մնայ չբարդացնելու տարուած բանակցութիւններուն ընթացքը, Կիպրական հարցին հիմնական լուծում մը գտնելու: Ան շարունակելով, արտայայտած էր Պետական Ներկայացուցիչին հանգամանքը բարելաւելու կարելիութիւնը մինչեւ իր պաշտօնավարութեան աւարտը, ինչպէս նաեւ փոքրամասնութիւններու հարցերով զբաղող մնայուն յանձնակատարի մը (commissioner) նշանակման անհրաժեշտութիւնը: Նոր սերունդին Յունարէն լեզուին գերազանց տիրապետած չըլլալուն արգելքները կառավարական գործերու տիրանալուն, Մելգոնեանի հողատարածքին պահպանութեան եւ Մակարավանքի կառոյցին ներկայ իրավիճակը, բոլորը որպէս մտահոգութիւններ տեղ գտած էին այս հարցազրոյցին մէջ:

16 Սեպտեմբեր 2008ին, Պրն. Մահտեսեան հեռաձայնային կարճ հարցազրոյց մը ունեցաւ «Մէկա» հեռատեսիլի լուրերու բաժինէն, New York Life Insurance եւ AXA Ապահովագրական Ընկերութիւններու, Յեղասպանութեան ընթացքին զոհուածներու ժառանգորդներուն վնասուց հատուցման կապակցութեամբ:

### **Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի այց**

Մեծ յաջողութեամբ իրականացաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պաշտօնական այցը Կիպրոս, որ տեղի ունեցաւ 21-25 Յուլիս 2008ին: Պրն. Մահտեսեանի դասաւորումով, Վեհափառ Հայրապետը 22 Յուլիսին տեսակցութիւններ ունեցաւ Կիպրոսի Հանրապետութեան



*Տիմիթրիու Խրիստոֆիասին հետ*



*Խրիստոստոմոս Բ. Արքեպիսկոպոսին հետ*



*Մարիոս Կարոյեանին հետ*

Նախագահ Տիմոթիուս Խրիստոֆիասին, Հանրապետության Խորհրդարանի Հայազգի Նախագահ Մարիոս Կարոյեանին, ինչպես նաև Կիպրայոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Պետ Խրիսոստոմոս Բ. Արքեպիսկոպոսին հետ:

Այս հանդիպումներուն, Վեհափառ Հօր եւ Հայ Պետական Ներկայացուցիչին կ'ընկերակցէին Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Վարուժան Արք. Հերկելեան, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գործադիր Իշխանութեան փոխ-նախագահ Յակոբ Աթէշեան, Կիպրոսի Թեմական Ժողովի ատենապետ Սեպուհ Դաւիթեան, Վարչական Ժողովի ատենապետ Տոքթ. Անդրանիկ Աշճեան եւ Վեհափառի գաւազանակիր Տէր Թորգոմ Քհնյ. Տոնոյեան: Բոլոր տեսակցութիւնները ընթացան մտերմիկ եւ ջերմ մթնոլորտի մը մէջ, որոնց ընթացքին արծարծուեցան ընդհանրապէս Հայ Ժողովուրդի եւ յատկապէս Կիպրահայ գաղութի ունեցած հիմնական դերը կղզիէն ներս, ներկայ պայմաններու լոյսին տակ: Այս հանդիպումները եկան ամրապնդելու այն սերտ կապը, որ Կիպրահայ գաղութը ունի Կառավարութեան եւ Կիպրոսի Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ հետ:

Նոյն օրը Վեհափառ Հայրապետը իր շքախումբով կէսօրուայ ճաշի հիւրը եղաւ Խրիստոստոմոս Բ. Արքեպիսկոպոսին, իսկ 23 Յուլիսին անոնք հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու բնակարանը:

### **Անպաշտօն հանդիպում**

Օգտուելով Օգոստոս ամսուայ ամառնային արձակուրդին Լոս Անճելըս գտնուելու առիթէն, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը արդիւնաւետ հանդիպում մը ունեցաւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան Ալումնիի երեք ներկայացուցիչներուն հետ:



### **Ձեռնարկներու ներկայութիւն**

Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր 2008ին, Պրն. Մահտեսեան ներկայ գտնուեցաւ «Միջազգային Խաղաղութեան Օրուայ» հանդիսութեան, որ տեղի ունեցաւ «Լիտրա Փալաս» պանդոկին մէջ, կազմակերպութեամբ Սլովաքիոյ Դեսպանատան: Այս հանդիսութեան ներկայ էին նաեւ Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Տիմիթրիս Խրիստոֆիաս եւ Թուրք Կիպրացի ղեկավար Մեմետ Ալի Թալաթ:

### **Հովանաւորութիւն**

Շաբաթ, 13 Սեպտեմբեր 2008ին, Հայ Պետական Ներկայացուցիչը DOT club-ի սեփականատիրոջ առաջարկին ընդառաջելով, նիւթապէս հովանաւորեց Եւրոտեսիլի մրցանքին Հայաստանը ներկայացնող Սիրուշոյի ելոյթը: Ներկայ էին մեծ թիւով հայ երիտասարդներ, որոնք առիթը ունեցան մօտէն վայելելու Սիրուշօն: Ան ելոյթ ունեցաւ հայերէն եւ անգլերէն երգերով, իսկ բացման եւ ելոյթի վերջին երգը եղաւ Եւրոտեսիլի «Քելէ, Քելէ»ն:

### **Տարեկան հանդիպում**

Հինգշաբթի, 18 Սեպտեմբեր 2008ին, Պրն. Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Շրջանային կամ Փոքրամասնական Լեզուներու Պահպանութեան Եւրոպական Հիմնաթուղթի Զարտուղարութեան մասնագետներէ բաղկացած պատուիրակութեան հետ: Ան շնորհակալութիւն յայտնեց պատուիրակութեան ցուցաբերած հոգատարութեան համար եւ նշեց Հայ Համայնքի եզակի ինքնութեան, լեզուի եւ հարուստ մշակոյթի իրականութիւնը: Շարունակելով, ան ընդգծեց, թէ գաղութին եւ միութիւններուն հիմնական նպատակն է մեր Մայրենի լեզուին պահպանումը, մանաւանդ Մելգոնեան Կրթա-

կան Հաստատութեան փակումէն ետք եւ կարելորութեամբ շեշտեց այս ամէնութեամբ Կիպրոսի Հանրապետութեան ցուցաբերած անսակարկ օժանդակութեան մասին: Միւս կողմէ սակայն, Պետական Ներկայացուցիչը այս յանձնախումբին ուշադրութեան յանձնեց կարգ մը կարելոր հարցեր, որոնց արագ լուծումը անհրաժեշտ է: Օրինակ, անձնական դպրոց յաճախող հայ աշակերտներուն նիւթական նպաստի յաւելում, բանակի ծառայութեան գծով կապուած կարգ մը քայլերու որդեգրում, ինչպէս նաեւ սփիւռքահայ ներգաղթողներու քաղաքացիական դիմումներուն հետ ամէնող զանազան հարցեր: Ան մանրամասնութեամբ նկարագրեց գաղութին դիմագրուած այլ դժուարութիւնները եւս եւ խիստ կարելոր նկատեց Կրօնական Փոքրամասնութիւններուն համար Նախագահական Յանձնակատարի մը անյապաղ նշանակումը, արագացնելու օրէ օր բարդացող հարցերուն լուծումը: Գաղափարներու փոխանակումէ ետք, պատուիրակութիւնը բարձր գնահատեց Հայ Ներկայացուցիչին տարած բժախնդիր եւ թափանցիկ աշխատանքը եւ նոյնիսկ անդրադարձ կատարուեցաւ «Լրատու»ի հրատարակութեան մէջ տեղ գտած Կիպրոսի Հանրապետութեան օրէնքներուն մասին տրուած տեղեկութիւնները: Եզրափակելով իր փոխանցումները, Պրն. Մահտեսեան յոյս յայտնեց, որ մօտ ապագային կը փափաքի տեսնել կարգ մը փոփոխութիւններ Եւրոպական Հիմնաթուղթի Կրօնական Փոքրամասնական օրէնքներուն մէջ:

### **Խորհրդաժողով Կրօնական Խորականութեան դէմ**

Չորեքշաբթի, 24 Սեպտեմբեր 2008ին, Պրն. Մահտեսեան մասնակցեցաւ Այլազանութիւն եւ Հաւասարութիւն Կրօնքի եւ Կրօնական Խորականութեան ԴԷՄ խորհրդ-



դաժողովին, կազմակերպութեամբ Ընկերային Ծառայութեանց Սպասարկութեան, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Holiday Inn» պանդոկին մէջ: Այս հաւաքին կը մասնակցէին Հայ, Մարոնիթ եւ Լատին կրօնական համայնքներու ներկայացուցիչները, Ombudsman-ի գրասենեակին ներկայացուցիչը, Քիքոյ եւ Թիլլիրիաս Միթրոպոլիտի տնօրէնը, ինչպէս նաեւ զանազան կազմակերպութիւններէ անձնաւորութիւններ: Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը խօսք ամենլով նախ ներկայացուց Հայ համայնքին իրայատկութիւնները բաղդատաբար միւս երկու համայնքներուն, որ կը զատորոշի իր Մայրենի լեզուի գործածութեամբ եւ պահպանութեամբ: Ան նշեց, թէ Եւրոպական Խորհուրդի Շրջանային եւ Փոքրամասնական Լեզուներու Հիմնաթուղթը 2002 թուականին արեւմտահայերէնը ընդունած է որպէս փոքրամասնական լեզու եւ պահպանութեան տակ առած զայն: Մենք մեր Մայրենի լեզուն Կիպրոսէ ներս չենք փոխարինած յունարէնով, ինչպիսին է պարագան

միւս երկու Կրօնական փոքրամասնութիւններուն: Շարունակելով ան անդրադարձաւ մեր կրօնքին, որ որոշ տօնական օրերու եւ խաչակնքումի պզտիկ տարբերութեամբ, հաճախ հարցականի տակ կը դնէ Ուղղափառ եկեղեցւոյ մեր պատկանելիութիւնը, ինչպէս նաեւ առաջին Զրիստոնեայ ժողովուրդը ըլլալու իրականութիւնը:

Հակառակ այն իրողութեան, որ կը զօրակցի բանակի պարտադիր ծառայութեան գաղափարին, Պրն. Մահտեսեան մատնանշեց Յունարէնը Մայրենի լեզուին պէս սահուն չգիտնալուն պատճառով, բանակի քննութիւններուն աստիճանաւորի կարգին չտիրանալը, եկեղեցիներու միայն երեք քաղաքներուն մէջ գտնուիլը եւ ներկայացուցիչին Պաշտպանութեան Յանձնախումբին անդամ չըլլալը, լուրջ արգելքներ են, որ առիթ կրնան ստեղծել խտրականութեան եւ ցեղապաշտական (racism) միջադէպերու: Հետեւաբար, ան կարելորութեամբ շեշտեց Կրօնական փոքրամասնութիւններու մասին պատմական տեղեկութիւններու ներառումը դպրոցական պատմութեան գիրքերուն մէջ, որպէսզի Կիպրացի գալիք սերունդը լաւատեղեակ ըլլայ Կիպրոսի մէջ ապրող կրօնական փոքրամասնութիւններուն մասին: Ներկայացուցիչին կողմէ եղան շատ մը ուրիշ առաջարկներ եւս, ինչպէս օրինակ շաբաթը մի քանի անգամ հայերէն լեզուով լուրերու հաղորդում Պետական Հեռատեսիլի Ընկերութեան 2-րդ կայանէն, վաւերագրական (documentary) տեսաերիզներու պատկերասփռում ելլն:



## Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետության Օրենքներուն

### Առեւտրական, ճարտարարուեստի եւ Չբօսաշրջիկութեան Նախարարութիւն

#### Ծրագիր քաջալերելու կիներու գործի ձեռնարկութիւններ

Այս ծրագիրին նպատակն է բարելաւել, աջակցիլ եւ քաջալերել 18-55 տարիքի միջեւ եղող կիներու անձնական գործի նախաձեռնութիւնները, որոնք կը փափաքին զբաղիլ արտադրութեան կամ առեւտրական, ճարտարարուեստի եւ զբօսաշրջիկութեան յատուկ մարզերէ ներս:

Վերոյիշեալ ծրագիրին իրականացումը կը նպատակադրէ շարժառիթներ ստեղծել, տրամադրելով նիւթական օժանդակութիւն, դաստիարակչական դասընթացքներ եւ պատրաստուածութիւն, ստեղծելու նոր, արդի եւ յատուկ պզտիկ գործառնութիւններ, մէջտեղ բերելու գործի նոր ծրագիրներ, բարձրորակ արտադրութիւններով եւ արուեստագիտութեամբ, ինչպէս նաեւ նեցուկ կանգնիլ զարգացնելու եւ բարելաւելու զբօսաշրջիկութեան մարզը:

Այս ծրագիրը կը կիրարկուի ամէն տարի եւ առաջարկները կը ներկայացուին նախապէս որոշուած յատուկ ժամկետի մը ընթացքին, որ կը յայտարարուի

Առեւտուրի, ճարտարարուեստի եւ Չբուսաշրջիկութեան նախարարութեան կողմէ:

Յարմար կը նկատուին հետեւեալ պայմանները ամբողջացնող եւ իգական սեռին պատկանող թեկնածուներուն դիմումնագիրները.-

- ◆ Նախքան դիմում ներկայացնելը, նուազագոյնը մէկ տարի Կիպրոս մնայուն բնակութիւն հաստատած
- ◆ Թեկնածուի տարիք՝ 18-55 սահմաններուն մէջ
- ◆ Դիմումի ժամանակ անգործ
- ◆ Արձանագրուած ընկերութիւն, որու գրասենեակը հաստատուած պէտք է ըլլայ Կիպրոսի Հանրապետութեան սահմաններէն ներս
- ◆ Պայմանադրեալ արձանագրութեամբ ընկերութիւն (Limited Company)
- ◆ Franchising-ը արգիլուած
- ◆ Մասնակցութիւն՝ մէկ առաջարկ դիմումնագիրով

### **Ելեւմտացոյցի (Budget) կանոններ**

Կառավարութեան առաւելագոյն նիւթական նպաստը՝ վաւերացուած ելեւմտացոյցին (budget) 50% կը կազմէ (որ ուղղակի պահեստի կը դրուի ընկերութեան դրամատան հաշիւին մէջ), առաւելագոյն գումար՝ €70,000 արտադրութեան իսկ €50,000 միւս մարզերուն համար:

Մնացեալ գումարը պէտք է տրամադրուի գործի ձեռնարկողին կողմէ:

Յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար կը խնդրուի հեռաձայնել 22-867180 թիւին:

Դասական եւ Արդի Երաժշտական Համոյթ Կատարողութեամբ

# «ՔԱՏԱՆՍ» Անսամպլի



Կազմակերպութեամբ Երեսփոխանական Գրասենեակի

## • Ուրբաթ 28 Նոյեմբեր 2008

Լազչայի Քաղաքապետարանի սրահ  
Կ.Ե. ժամը 8.30

## • «Քատանս» Անսամպլը կը ներկայացնէ

Կոմիտասի, Սայաթ Նովայի, Շիրիմի, Խաչատուրեանի,  
Պապաճանեանի, Յարութիւնեանի, Ջարիֆեանի,  
Կերշուրմի, Սթամբուլիի, Կարսէլի եւ Փիագոլլայի գործերը

### Տոմսերը Ապահովել

- Նիկոսիա  
Երեսփոխանական  
Գրասենեակ  
22-454540

Armenias Kiosk  
22-420503

Moufflon Գրախանութ  
22-665155

- Լառնաքա  
BIDI  
24-658085

- Լիմասոլ  
BIDI  
25-336019

## Տարեցներու Հանդիպում

Երեսփոխանական Գրասենեակի նախաձեռնությամբ եւ համագործակցությամբ Կիպրահայ Համայնքի Տարեցներու Խորհրդարանի Երեսփոխաններուն, հաճոյքով կը տեղեկացնենք, թէ Կիրակի, 2 Նոյեմբեր 2008, կ.ա. ժամը 11:30ին, Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ հանդիպում մը, ուր մեր համայնքի տարեց անդամները պիտի լուսաբանուին թոշակառուները մտահոգող բոլոր հարցերուն շուրջ:

◆ Խօսք պիտի անէ Պրն. Քոստաս Սքարփարիս:

Այս հանդիպումին, յանձնարարելի է նաեւ մեր համայնքի Երիտասարդ անդամներուն ներկայութիւնը, որպէսզի անոնք ալ իրենց կարգին տեղեակ ըլլան այն նպաստներուն եւ օգնութիւններուն մասին, որ կրնայ տրամադրուիլ ընտանիքի մը տարեցներուն:

Ձեռնարկէն ետք տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն: Սիրալիր հրաւեր բոլորին:

**Երեսփոխանական Գրասենեակ**

## ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

### Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42  
Ել. Հասցէ office@armenianmp.com  
Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

### Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42  
Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy